22. ՍԱՋՍԱՆ ԻՆՆ ՆԱՋԼՈՒ

Կէլնի կէլնի մեյ խատ թաքավոր: Էսա թաքավորուն կէլնի մեյ խատ ախչիկ:

Էսա ախչիկ մեկ օր կէրթա թաքավորի մոտ, կասի. - Թաքավոր ապրած կենաս, քյո խազինեն քիթյուն կիշեր կտանեն, տյու իսկի չիս իմնա: Սեյ խատ ամր արա, ես էտա գյեռղեր պոնեմ:

Թաքավոր կծծղա ուր ախչկան վերեն, կասի. - Ախչիկ, տյու ախչիկմ խե քյո հալին,՝ տյու ի՞նչխ կանաս պոնե:

Ախչիկն ի, կասի. - Թաքավոր ապրած կենաս, քյո դավին ի՞նչ ի, տյու ամր արա տես ի՞նչխ կպոնեմ:

Թաքավորն ի, կասի. - Աղեկ, դե կնա, ի՞նչխ կիտես, ըսկուն արա:

Էսա ախչիկն ի, կուգա մարթու խալավ կխայնի, կէրթա խուզինի տռան առած փոսըմ կփորի, կկայնի էտա փոսի մոտ, կաչկի կիշեր-ցերեկ, խենքյ եփ կուգյան գյեռղեր:

Կիշեր-ցերեկ թաքավորի ախչիկ թուր պոնե ծեռ, ակլա յի տրե՝ տիսնա խենքյ եփ կուգյան: Կտիսնա, որ մեյ խատ վիշապ կուգյա, որ խազինեն տանի, համան ախչիկ թրով կգանի, վիշապի գյլեռխ կկտրի, կվեռրյուցի կթալի էտա փորած փոսի մեչ:

Էն մեկել օր վիշապի ախպերներ կտիսնան որ ուրենց ախպեր չի գյա, կէլնեն վեց ախպերովն էլ կուգյան տիսնան խենք ինոնց ախպեր ի՞նչխ էլե. կասեն՝ պամ կա: Կէլնեն կուգյան: Կուգյան կխասնեն թաքավորի տռան մոտ, մեյ-մեկ կմոտռխասնան խազինի տռան մոտ թե չէ՝ ախչիկն ի, համան թուր կքաշի, կգանի խինգյ ախպոր կսպանի, մեկին էլ, որ պստիկ ախպերն էր, յարալու կէլնի, կփախի: Էն սպանած վիշապներն էլ կթաղեն էտա փոսի մեչ:

Էսա յարալու ախպերն ի, կփախի կէրթա ճամբախ կմեզի, կասի. «Ինչ անեմ, գանեմ, որ իմ ախպերներաց ոխ էսա ախչկան մոտեն առնեմ»:

Էսա վիշապն ի, կէրթա՜ մեյ խատ խորոտ այուլի մարթու խալավ կկնդնի, կխագյնի կուգյա՜ թաքավորի քյոշկ-սարի տոնեն կէրթա՜, կուգյա՜ փոսթա կզանի, որ զուր թաքավորի ախչիկ տյուս էլնի իսոր տիսնա, պանովըմ բալքի խապի, էսա ախչկան, որ ծեռ պերի: Էսա վիշապն ի չուր իրիկուն էտա տեղ կէրթա՜, կուգյա՜, զորեով թաքավորու ախչիկ կտեսնա, որ էլեր էր փենջուրեն կայներ էր, սեյր կաներ թաքավորի խաս պախչեն: Քիրդան էսա ախչկան աչկ կինի էսա տղին: Ախչիկ որ կտիսնա էսա տղի խորոտկութեն, խելքյ կթալի վերեն, ուր սրտին կկպնի: Աջալա կվազի կէրթա՜ թաքավորու մոտ, կասի. - Թաքավոր ապրած կենաս, մեր խաս պախչի տոռան ա՜ռաճ մեյ խատ խուռնի-խրեղեն, ջահել, բաբագյիթ տղեմ՝ կէրթա՜ կուգյա՜, ես ինոր շատ խավնա, քեզնիյ աղաչանքյ կանեմ, որ էտա տղեն պիրես զի խամար:

Թաքավոր ի՛նչխ անի, ի՛նչխ չանի, մեկ ախչիկ ունի. էտա մեյ խատ ախչկան խաթրիյ չուզե էլնի: Ամր կանի, կասի. - Էտա տղեն կանչեք մոտ զիկ:

Կէրթան լաճուն կկանչեն, կասեն. «Արի, թաքավոր քյե կկանչի»: Լաճն ի, տեղոտղալեն կուգյա՜, կէրթա՜ կմտնի թաքավորի օտեն, կէրթա՜ կկայնի մեկ պուճախ, կկծկվի կմնա:

Թաքավոր էսա տղին կտիսնա, կտիսնա որ աղորթ, մեյ խատ խորոտ, բարագյիթ տղա յի:

Կասի. - Բալամ, ես մեյ խատ ախչիկ ունեմ, իմ ռիթյուն էլած, չէլած իմ մեռնելուց սորա ինորն ի, ես էլ չեմ ուզե, որ իմ ախչկա խաթր զիզնիյ մնա: Մկա ել իմ ախչկա աչկ ինգյեր ի քյե, կասի՝ իլաքյ-բիլաքյ են լաճուն կտոնեմ, ի՞նչխ անեմ, ուրիշ ճար չկա, մեյ տիր աչկ ինգյե քյե. ի՞նչ կասես, խոսք կուտա՞ս:

Էսա լաճն ի, կասի. - Թաքավոր ապրած կենաս, - մեչ մտած ուրախցե, կասի. «Վալա, իմ պան ճկվավ», - ես քյո ամրին ի՞նչ կանամ անե:

Իսրա վերեն թաքավոր կկանչի իր զմեն վազիրներ, ուր ալայներ, զմեն-զմեն խարսնիս կանին յոթն օր, յոթ կիշեր:

Կընցնի մեյ քյանի շապաթ: Էսա լաճն ի, ավուր մեկի կէրթա՜ թաքավորու մոտ, կասի. - Թաքավոր ապրած կենաս, ես էլ երկիր ունեմ, ես էլ աշխարհ ունեմ, տուն-տեղ ունեմ, տան-տեղայ տեր իմ:

Աղաչանքյ կենի, պաղատանքյ կենի, որ թողնի՝ էրթա՜ ուր տուն: Թաքավոր խաթրներայ չէլնի, կասի. - Տյուքյ կիտեքյ:

Էն մեկել օր ճանպխի պատրաստութեն կտիսնան, թաքավորն ի, իսրանց սալամաթ տեղ խասուցելու խամար մեյ թաբուն ասքյար կտնի խետ իսոնց, ճամխու կտնի:

Կէրթա՜ն, կէրթան, կխասնեն կես ճամբա՜խ:

Էսա լաճն ի, ասքյարներաց կասի. - Տյուքյ եր գառցեքյ, էսա մեր խողն ի, մենքյ կէրթանք, մարթ չկանա ասե՝ ծեր աչիչ վերեն ունքյ կա:

Ասքյրներաց կէօրեռխկի եր. իսոնքյ՝ կնիկ մարթ կինեն ինոնց ճամբախ, կէրթան:

Շատ կէրթան, քիչ կէրթան, մեյ խատ տեղ ախպյուր կա: Կտորըմ կանաչ կա, մեյ խատ էլ ծառ կա: Էսա տղեն ի, կտիսնա ասքյերներ էտեչա զատաց են, կասի. - Ախչիկ, շատ ենքյ նիղացե, արե նստենք էսա ծառի տակ, խով ի, մեյ կտոր խանգյստանանքյ, սորա կէլնենքյ, յավա՞շ-յավաշ կէրթանքյ:

Կէրթան կնստեն էտա ծառի տակ, խաց-պան կուտեն, կնստեն, կխանգյստանան:

Էսա լաճն ի, կասի. - Ախչիկ, էստեղ ինչ անուշ սարին ի, արի իմ գյլեռխ քիչմ աչկի:

Ախչիկն ի, գյլեռխ կտնի վեր ուր ծնգյան, կբաշլայի աչկել: Էսա տղեն էլ սուտ քյուն կտնի վերեն: Էսա ախչիկն ի գյլեռխ աչկելու գյախ, բիրդան կտիսնա էսորա գյլխու վերվի յարի տեղ: Կտիսնա, որ ուր թրով զարկած յարեն ի, որ զարկե վիշապուն: Էսա ախչիկ, որ չտիսնա էսա յարեն՝ բիրդան լեզյուն կկապվի: Լաճն ի, որ կտիսնա ախչիկ խասկցավ ինչ պան ի, կիտի, թե ուր զարկածն ի, համան բիրդան տեղից կէլնի վեր, կասի. - Հա՛, ի՞նչ տեսար, ճանչցա՞ր էտա ի՞նչ նշան ի, - կասի, - էտա որ կա՝ քյո տրած նշան ի: Սի՞տուր ի, էն օր որ իմ վեց ախպոր վիզ կտրեցիր, լցիր էն փոսի մեչ, զիկ էլ զարկիր, յարալու արիր, չկառցար սպաներ, ես ջերով փախա: Ես ինոնց պստիկ ախպերն իմ, էն վիշապներաց ախպերն իմ: Տես, էտա էն նշան ի, որ զարկիր: Ես պախեցի իմ միտկ չուր էսօր: Էսօր զաթի ինգյար իմ թոռ, տյու էլ իմ ծեռնից ի՞նչխ պիտի պոծնես: Սկա տիսնամ խենքյ տյու ի՞նչխ պիտի մարսես, ի՞նչխ պիտի փախնես:

Էսա ախչկան խորոտ, էրկեն ծամեր կէլնի, լաճն ի, էսա ախչկան մազեր կտաթյուտի ուր ծեռաց վերեն չվնի պես, կտանի կկախի էտա ծառի ճոռնից, կայիմ կխանգյոռցի, ինքյն էլ կէրթա դարրրրերաց ցախ-պան կպիրի, որ էտա ախչկան վառի:

Էսա ախչիկն ի, լաճու ախուն ծեն չի խանե չուր կզատանա ըսկուն որ էլ չէրնա: Կտիսնա, որ էն դիխից մարթ կէրնա: Կմոմռա, կբոռա, կասի. - Ի սեր աստծու, խասեքյ, զիկ ազատեքյ:

Ախչիկն ի, կտիսնա, որ էն մարթեր, որ կուգյան դիխ ուր, աղաչանքյ-պաղատայնք կենի, ծեռ-ոտ կպաքյի, կասի. - Զիկ մեկ ճար արեք, ազատեք էսա տեղեն:

Էսա մարթերն էլ բազրգյան ին, ապրանք պանոցեր են, կէրթան,

զաթի յոթ էշ ունեն, յոթն էլ պառկված ի: Ի՞նչխ անեն. ի՞նչխ չանեն, կմոտոխասնան, կտիսնան որ ի՞նչ. մեյ խատ խորոտ, սիրուն ախչիկըմ, ուր մազերաց ծառից կախվե՝ ճելան-ճելան կերթա կուգյա: Կխոցճան էսա ախչկան վերեն, կպանցրանան էսա ծառի վերեն. որ առցկեն ախչկան: Ինչխ կանեն, չեն անի, չեն կանա էսա խանգյոռց քուկե: Էլ ճարեր կկտրի, կպոնեն իսդա ծամեր կկտրեն, կառնեն տակ, մազերաց կես կմնա ծառի վերեն: Մեյ կտոր կնստին, էսա ախչիկն ի, հալ-հեքիաթ էսա մարթերաց կպատմի, ուր գյլխու վոդիեքյ՝ ի՛նչ որ էկե ուր գյլեռխ:

Էսա բազրգյաններն են, որ կտիսնան էսա պան, յալա բաբամ կենին, տավարներ կպառնան: Ի՞նչխ անին, ի՞նչխ չանին՝ էսա ախչկան որ ազատեն վիշապի ծեռնից: Ուրենց պեռներաց մեկ կպանան, կտնին մեչ պեռան, կինին ճամբախ: Շատ կերթան, քիչ կերթան, կտիսնան որ ի՞նչ. կերթան, կերթան՝ հա եր կմնան, եա եր կուգյան: Մեյ խատ էլ կիրիշկան իտև, կտիսնան որ մեյ խատ վիշապ իտիվանց մեկ թարաֆեն ը՛ֆ, ը՛ֆ կանի, իսոնց եր կքաշի: Մեկ էլ կբոռա, կասի. - Է՜յ կայնեք, տոր կերթաք, կայնեք ծե պան կասեմ:

Իսոնքն ի, կտիսնան որ վիշապ կուգյա ղիխ ուրենց, յավաշըմ կկայնեն:

Վիշապն ի, որ կուգյա իսոնց մոտ, կասի. - Տյու՞ք իք ըստեղեն ընցաք, իսկի ախչիկ չտեսա՞ք էսա դարբար:

Էսա բազրգյաններն ի, կասեն. - Չէ, խա: Մենքյ էկանքյ ըսկնա ընցանքյ՝ կերթանքյ մեր քյաղաքյ: Համա մենքյ նա ախչիկ ինք տիսե, նա պան: Մենքյ մարթ չինքյ տիսե:

Էսա վիշապն ի, իսոնց խաբրին չի ավատա, կասի. - Պիտի էլնեմ էսա պեռներ մեյ-մեկ պանամ, աչկեմ:

Էսա բազրգյաններն ի, կասեն. - Էլի պաց, աչկի:

Էսա բազրգյաններ ի՛նչ կանդար որ կասեն՝ էլի աչկի, համա ինոնց սիրտ տրոնի-տրոնի կթալի:

Վիշապն ի, կելնի պեռներ ուր ծեռնով կպանա, մեյ-մեկ կիրիշկա: Վեց պեռ կպանա բիթունի մեչ կիրիշկա: Կիրիշկա, որ զատ չկա: Կմնա են մեկ, կասի. «Ա՜հյ, էսա վեցի մեչ մեկ զատ էլ չկնդա, իսրա մե՞չ պիտի էլնի»: Կասի կքյաշվի զատ, կերթա են դարբրներ աչկելու:

Էսա բազրգյաններն ի, որ կտիսնան են մեկ պեռ չի աչկե, ախչիկն էլ զաթի ինոր մեչն էր, համան ուրենց պեռներ կպառնան, կինեն ինոնց ճամբախ, կերթան:

Էսրանքն ի, կերթա՜ն, կերթա՜ն, շատ կերթան, քիչ կերթան, կերթան կխասնեն մեյ քյաղաքյ: Էտա քյաղքյի ճամբխի պռուկն էլ մեյ խատ պառվու տուն կելնի: Տուռ կտփեն, պառվուն կխանեն

տյուս, կբարյուշեն, էսա ախչկան կուտան պառվու մոտ պախ, ամսականով, կասեն՝ պախի, չուր մենքյ գյանքյ տանենքյ: Էսա պառվուն էլ կապսպրեն, որ ախչկան տյուս չխանի:

Կընցնի մեյ քյանի տարի: Ավուր մեկ էսա պառավ տուն չէլնի. կէրթա ուր պարեկընմի տուն: Ախչիյն ի, կտիսնա որ պառավ տուն չի, տուն էլ ճյուր լազըմ ի, կնաչարանա, կասի. - Ջայհնամ, էսա մեկ օր կէրթամ ճյուր կպիրեմ:

Կասի՝ կուժ կառնի, կէրթա ախպյուր: Կէրթա ախպրի մոտ, կտիսնա, որ թաքավորու տղեն էն տիխ ծին պոնե, կճրի: Ախչիկն ի, կուժ ճյուր լյե, կայնե թամաշա կանի:

Թաքավորու տղեն էնտեխ ի՞նչխ կանի ծիյուն, որ ճյուր խմի, ճարմյուքյում չկա, չխմի: Կէրթա, կուգյա կիրիշկա ճրի մեչ, կխրխնջա, ճյուր չի խմե: Էսա թաքավորու լաճն ի, կպարկանա, կքյաշի կամշին, կզանի ծիյուն, էլըմ ճար չկա: Ծին գյընա կէրթա կիրիշկա ճրի մեչ, խրխնջալեն եր կտառնա, ոտնով գյետին կգակի: Լաճն ինքյ ուր կասի. «Էսա ծիյուն ի՞նչ էլեր ի: Աչկ ի առե՞, ի՞նչի ընկնա կէրթա կիրիշկա ճրի մեջ, ճյուր չի խմե, խրխնջալեն եր կտառնա»: Կասի, կմոտոխասնա, կասի. տիսնամ խենքյ ի՞նչ կա դա: Էսա տղեն ի կուգյա կիրիշկա ճրի մեչ, կտիսնա որ ի՞նչ. մեյ խատ շառավելքըմ կէրնա ճրի մեչ: Էտա շոյզն էլ մեյ խատ խուտնի-խրեղեն ախչիկ մի: Թաքավորու տղեն ի, որ կտիսնա էսա պան ճրի մեչ մեյ խատ կիրիշկա դարրուր խենքյ էսա ինչ ախչիկ ի, որ շոյդք զարկե ճրի մեչ: Իտն կտառնա, կտիսնա որ մեյ խատ խուտն-խրեղեն խորոտ ախչիկ, կուժ գյո լյե, առե կտանի: Թաքավորու տղեն ի, որ իսրան կտիսնա՝ իտնանց յավա՜շ-յավա՜շ կէրթա, տիսնա խենքյ էսա ախչիկ դեր կմտնի: Կէրթա, կտիսնա, որ՝ ախչիկ կնայ մտավ՝ մեյ խատ խոլխոլա տուն: Թաքավորու տղեն ի, էտա տեղ իսոր ինոր տյուր-տրկյներայ կխառյուցի, կասի, թե. էսա ախչիկ վի՞րն ի: Վերջապես սալախ կառնի, որ մեյ խատ պառավ կնկա յի:

Թաքավորու տղեն ի, կթողնի կուգյա ծին կճրի, կէրթա տուն: Որ կէրթա տուն, էտա խիյալով դողրի կէրթա խոր մոտ, կասի. - Թաքավոր ապրած կենաս, էսօր իմ ծին ճրելու գյանխ մեյ խատ ընկուն ախչիկ իմ տեսե, որ իսկի մտկես չէրթա, ի՛նչխ որ կասեն, դյունա-գյուզալի, դողրի ընկուն էր:

Կպատմի, վարհասլ, խոր թե ինչխ ծին ճյուր չէր խմի, մայար էսա ախչկան շոյդքյ ճրի մեչ կէրնար՝ ինորիյ էր. վերջապես կասի տղեն, թե. - Չիմ ավատա, որ աշխարիս մեչ ընկուն խորոտ ախչիկ էլնի: Էդա ախչիկ, թաքավոր ապրած կենաս, - տղեն կասի, - պիտի ուզես զիկ խամար:

Թաքավորն ի, կասի. - Ա՜յ բալամ, ախչիկ պակա՞ս ի, որ տյու

կնայիր կպար էտա աղքյատ պառվու ախչկան: Էսա կանդար թաքավոր կա աշխրի վերեն, ինոնց ախչկներ քյե խամար ին, խազար-խազար անքամ խաբար են էօրեռխկե, թե ծեր լաճուն տանք, ես ալա խոսք չեմ տվի, տյու ի՞նչի դարդ կքաշիս: Ամոթ չի՞ մե, մենքյ ինչխ էրթանք էն աղքատ պառվու ախչիկ պիրենք քյե:

Տղեն ի, կասի. - Իլաքյ-բիլաքյ էտա ախչիկն էլնի՝ կառնիմ, չէլնի՝ նա կպսայվեմ, նա պան: Կէրթամ էսա քյաղքյիս կկուրիսիմ:

Թաքավորն ի, որ էսա պան կլսի, ի՛նչխ կանի, լաճու դեմ չի կանա առնե: Ճար կկտրի, կկանչի ուր նազր-վազրներ, ուր բալքյի իսորան համոզին: Ինչ ճար որ կանեն, չէլնի:

Թաքավորն ի, կնաչարանա, կկայնի վազիրին կէօրեռխկի էտա պառվու մոտ խնամախոս, որ պառվուն առնի զյա ուր մոտ, խենքյ ի՞նչխ պիտի անեն:

Էսա պառավն ի, որ կտիսնա սաղրազամ էկե ուր կկանչի, շատ կվախենա, կասի. «Աջեբա թաքավոր զիկ ի՞նչ պիտի ասի, ի՞նչի է կանչե»: Ի՞նչխ անի, չանի, կէլնի կէրթա: Ի՞նչխ անի՝ թաքավորու ամրն ի: Կէլնի կէրթա մո թաքավոր, կասի. - Թաքավոր ապրած կենաս, զիկ ի՞նչի ես կանչե:

Թաքավորն ի, մտածմունքի մեչեն մեյ խատ զյլեռխ վեր կվիրուցի, կասի. - Պառավ, լսեր իմ, որ մեյ խատ խորոտ ախչիկ ունես, էտա ախչիկ ես կուզեմ պիրեմ իմ լաճուն:

Պառավն ի, որ էսա պան կլսի, էլ չկիտի ի՞նչխ անի ուրախութեն, մեկ էլ կմտածի, կասի. «Զայիր թաքավոր իմ վերեն թռանա կանի, էսա ի՞նչ խաբար ի, էլ ախչիկ չկա, որ էկավ կպավ իմ ախչկան»:

Ի՞նչ ասի, ի՞նչ չասի, կասի. - Թաքավոր ապրած կենաս, ախր ի՞նչխ կէլնի, որ տյու իմ ախչիկ պիրես քյո լաճուն, մենքյ ֆուկարա, մեր տուն խոլխոլա, քյո լաճ ի՞նչխ կանահաթ կանի, գյա իմ տնեն ախչիկ տանի:

Թաքավորն ի, կասի. - Քյե ինչ դավի կա, որ ես կուզեմ, տյու ի՞նչ կանաս ասե, կնա շոտ պատրաստութեն տես, որ նշանենքյ:

Պառավն ի, կասի. - Թաքավոր ապրած կենաս, տյու կիտես, ինչխ որ կուզես:

Պառավն ի, ոտկեր զյետին չառնի, կէլնի կուգյա տուն, պատրաստութեն կտիսնա:

Նշանտրեյքի՝ օր թաքավորու տնեն չուր պառվու տուն խալի կփռեն, վարթ, ծաղիկ կցանեն: Առրա յոթ օր, յոթ կիշեր խարսնիս կանեն, ախչիկ կտանեն:

Ախչիյն ի, որ կպսայվին, կպոծնեն, թաքավորու տղին կասի. - Քյու մարթ, ինչ կանդար, որ մենքյ փսայվանքյ, համան մեկ աղաչանքյ ունեմ ես քյեզնիյ: Ես քյեզնիյ կուզեմ մեյ պան, թե որ

էտա պան տյու գյլեռխ պիրիր, ես աշխրի իրեսի վերեն էլ դարդ չունեմ:

Թաքավորի տղեն ի, կասի. - Իմ հյուրի-փարին, ի՞նչ ի քյո ուզած, ասա բա ես ի՞նչի խամար իմ, որ քյո ուզած չանեմ:

Ախչիկն ի, կասի. - Քյեզնիյ պախիմ, աստծուց ինչխ պախիմ, վարհասլ հալ-հեքիաթ, ես մեկ դյուշման ունեմ, որ իմ իրև ինգյե, կուզի զիկ սպանի: Ես քյեզնիյ կուզեմ մեյ խատ ըսկուն պանցր տուն, որ տանիս տարին տրսվերկու ամիս ծյուն էլնի, տան մեյ կող տռան վերեն ասլան-կափլան էլնի, իսկ էն մեկել կողմեր ռիթյուն սև ծով էլնի, որ ես խանգյիսր ապրեմ:

Թաքավորու տղեն ի, կասի. - Էտա ինչ պան ի, որ ես չանեմ, քյո ուզած համան թող էտա էլնի:

Կասի և ամր կանի, որ տուն շինեն: Զքյաշի մի քյանի շապաթ, տուն կկայնցուցեն, ախչիկ կքյաշվի էտա տան մեչ, խանգյիսր, քյաղցր անուշ կապրեն:

Շատ կմնան, քիչ կմնան, ավուր մեկ էսա վիշապ աշխրե-աշխար ֆռայե, ուր կնիկ չի կնտե: Կուգյա էսա աշխարն էլ կան կուգյա, կան կուգյա, ըստեխ կան կուգյա, էնտեխ կան կուգյա, տիսնա խենքյ ո՛րտեդիյ մեյ խատ խանի: Կէրթա, կուգյա, կուգյա էսա թաքավրու պանցր տան՝ առաճ կկայնի:

Կասի. «Էսա տուն ի՞նչի ըսկնա պանցր ի, կա չկա, կասի, էսա ախչիկ ըստեղ էլնելու յի»:

Էսա՝ վիշապն ի, կմտածի, կասի. «Ը՛մ, անպատճառ ստեղն ի, էսա ախչիկ»: Կասի, կէրթա մեյ խատ ռչխար կպիրի, կմորթի, կթալի էսա ասլան-կապլայիտերայ պերան, ծեներ կկտրցուցի, կառնի փեստատ, կմտնի ներս: Կմտնի ներս՝ տիսնա որ ինչ՝ քառսուն խատ տուռ կա, զմեն տուռն էլ դամյուրիյ շինված ի, ռիթյուն էլ փակուկ ին: Էսա վիշապն ի, ի՞նչխ անի, ի՞նչխ չանի, որ տռան պատ ծակի, ներս մտնի: Շատ կմտածի, քիչ կմտածի, վարհասլի կբաշլայի մեյ տեղ ծակել: Կծակի թե չէ՝ մեյ խատ թարանջա կէլնի էնդեղ, դռդրի էտա թարանջիյ կէլնի վեր, կէրթա դռդրի թաքավորու պառկած էօդի տռան առաճ, տուռ մ'է կտոր ճեղք կանի, կիրիշկա ներս՝ կտիսնա, որ թաքավրու տղեն խեստ ախչկան պառկեր ին, քներ ին:

Էսա վիշապն ի, համան շուրըմ ներս կմտնի՝ մեյ խատ թեռզ կյանի վեր թաքավորու տղի իրիսին, կթմրցուցի, էսա ախչկան կխանի վեր, կպիրի մազեր կկապի փեստրի կոթին, մեյ խատ էլ չվան կկնտնի, կտանի փենջստրիյ կկախի տակ, չվնի մեկ ծերն էլ կկապի փենջարի դամյուրներայ:

Էսա ախչիկն ի, կտիսնա որ ուր փոթնում չկա, ինքն էլ տղով ի, պատի իրեսնվեր կախվիր ի, կասի. «Յա՜, Մայրամ աստվածածին,

քյեզնից մեյ փիլաքյ կանեմ, փյու էսա նեղ տեղից զիկ փոթուցես, հաղշարթ էլնի՝ իմ տղեն լաճ էլնի, թե ախչիկ՝ քյե մատաղ անեմ»:

Ախչիկն ի, որ էսա խարար չի ասե՝ բիրդան փենջատից վիշապի ուտ կլպզտրա, կինի ծով: Ախչիկ որ կտիսնա, կբաշլայի հավար բոռալ, կասի. «Խասեք, զիկ ազատեքյ էսա տեղից»:

Թաքավորի տղեն ի չուր էնգյախ խելքյ կուզյա վերեն: Քիրդան կնգյան ծեն կինի ականջ: Վեր կթոնի, կէլնի փենջարից, կիրիշկա կտիսնա որ ի՞նչ. որ ուր կնիկ պատի իրեսից կախ ճելան-ճելան կէրթա էն կող, կուզյա էս կող: Մեյ ծենով էլ կբոռա, թե զիկ ազատեք:

Թաքավորու տղեն ի, կխասնի շոտըմ ախչկան, կքյաշի վեր, կտանի ուր էոդեն, էլած-չէլած զմեն կխառուցի. էսա վո՞վ արաց, վո՞վ չարաց. ախչիկն ի, կասի. - Մեյ խատ իրիշկա էսա ծովի իրես, տես էնա վո՞վ ի:

Լաճն ի, կիրիշկա ծովի վերեն, կտիսնա, որ ի՞նչ. մեյ խատ վիշապ գյեռ սատկե, մնացե էնտեղ տալկեն կտանի էն գյլեռխ, կպիրի էսա գյլեռխ:

Թաքավորի տղեն ի, ամր կանի, որ էտա ջանդակ խանեն տյուս: Կխանեն կպիրեն կտնեն թաքավորի տղի առաճ: Էսա ախչիկն ի սկուն կվախենա, որ կասի. - Վառեք էսա ջանդակ, որ իսոր նամ-նմուշ չերնա:

Կպիրեն կվառեն ջանդակ, մոխիրն էլ կուտան քյամուն:

Շատ կկենան, քյիչ կկենան, թաքավրու տղին մեյ խատ ախչիկ կէլնի: Էսա ախչիկն ի, կէլնի չորս տարեկան: Մեկ օր կէլնի փողան կխաղա, էն թարաֆից մեյ խատ կնիկ կուզյա էսա ախչկան կասի. - Ախչի՜կ, կնա քյո մորն ասա, թե տյու քյո ախչիկ մատաղ իր արե, ընչի՞ չես իտա քյո մատաղ:

Էսա ախչիկն ի, որ էսա պան կլսի, կվազի կուզյա մոտ մոր, կասի. - Մարե, փողան մեյ խատ կնիկ, զիկ ասաց. «Քյո մեր քյե մատաղի արե, ընչի՞ չի տա»:

Մերն ի, բիրդան միտ կինի, կասի. - Խա, բալամ, աղորթ կասի էն կնիկ:

Կասի, կպոնի ուր ախչկան, էրկու իրիսի կպաքյի, կտառնա կասի. - Բալամ, մատաղ որ կա, տյու ես, դե կնա էն կնգյան ասա. «Ես եմ մատաղ, գյեռ էկա»:

Էսա ախչիկն ի, կուզյա էտա կնգյան կասի. - Իմ մեր կասի՝ ես եմ մատաղ, էրթանքյ:

Կնիյն ի, կտիսնա, որ իսրա մեր մարդ ի, մարդանա ուր ախչիկ պայշխեց, կտառնա էսա ախչկան կասի. - Քյանի որ քյո մեր ըսկնա մարդ ի ուր մատղի մեչ, ես քյե քյո մոր պայշխեցի:

Մորա կպոնի ախչկան իրիսներ կպաքյի, կբաշլայի օխնել, կասի. - Խորոտ ախչիկ, տյու որ ման գյաս, քյո ման էկած դարբար ոսկի թափի, թե որ ծծղաս՝ վարթ-մանուշակ թափի քյո պերնիկ, թե լաս՝ անձրև գյա, թե մալուլ էլնես՝ ամբի, կրայտա, գյոգյոա:

Աղորթ որ ախչիկն ի, եփ տուն կուգյա, դարբար բիթյուն ճամբախ սադա ոսկի ի թափե, որ խաբար տա վարթ-մանուշակ կթափի, որ ծծղա՝ նարգյիզ-ռըհան կվազի, որ մալուլ էլնի՝ երկինք կկրայտա, կգյոգյոա, որ մ'ասե:

Էսա պան որ կտիսնա, բիթյուն ջաղամաթ կասի. - Էսա ի՞նչ պան ի, խրայշք ի՞, ի՞նչ ի:

Ըսկուն էլավ որ բիթյուն աշխար իմցավ թե ըսկնա ախչիկ կա թաքավրուն, որ քելի՝ ոսկի կթափի, որ ծծղա՝ վարթ-մանուշակ կթափի պերնիկ, որ լա անձրև կուգյա, որ մալուլ էլնի՝ երկինք կամբի կկրայտա, կգյոգյոա:

Ավուր մեկ ուրիշ թաքավոր էսա պան կլսի: Ուր սադրազամ կէօրեռխկի էսա թաքավորու մոտ, իսորա ախչիկ կուզի ուր տղին: Էսա թաքավորն ի, կտիսնա որ ախչիկ խասեր ի, խոսք կուտա: Նշանտրեյքի օր էն թաքավորու երկբեն չուր էսա թաքավորի երկիր բիթյուն ճամխիյիտանքյ խալի կփռին: Յոթն օր, յոթ կիշեր խարսնիս կանեն:

Էսա թաքավրու տղեն ի, կէրթա թաքավորու մոտ, կասի. - Թաքավոր ապրած կենաս, ես, - կասի, - իմ կնիկ պիտի առնեմ, էրթամ մեր՝ երկիր:

Թաքավորն ի, ինչ կանա ասի. կասի. - Տյու կիտես:

Թաքավորի ախչկա մերն ի, ճամխիյիտերաց շատ կվախենա: Ինոր խամար որ ի՛նչ օյին ասես՝ իկիր ի ուր գյլեռխ, իտոր խամար կասի. չէլնի որ ուր ախչկա գյլեռխն էլ էտա ողիյեք գյա չի ուզե ուր ախչկան մենակ ճամխի, ուր փեսին կասի, որ ուրենց սադրազամ կանչի, դնի խեր ուր ախչկան չյուր ծեր երկիր, նոր էնտեղիս թող եր դառնա գյա:

Թաքավորու տղեն ի, կասի. - Թող գյա:

Թաքավորն ի կկանչի ուր սադրազամ, կայիմ-կայիմ կթամխի, որ ուր ախչկան մույաթ մնա, սաղ-սալամաթ ուր տեղ խասուցի: - Կխասնես, - կասի, - էնտեղ իմ ախչկա մազերից մեկ-էրկու ճող կկտրես, կպիրես նշանապան:

Սադրազամն ի, գյլեռխ կուտա թաքավորուն, կասի. - Թաքավոր ապրած կենաս, ըսկուն տանեմ, որ չասեն՝ իսոր աչիչ վեբվեն ունք կա:

Ճամխի պատրաստութեն կտիսնան, որ էն մեկել օր ճամբախ էլնեն:

Էսա սադրազամին մեյ խատ քյավթառ, սև քյոնած գյեշ, քյառսուն տարեկան ախչիկմ կէլնի: Սադրազամն ի, մեկ օր ուր կնգյան խետ մաշվարաթ կանեն, կասեն. «Պիրենքյ մեր ախչիկ էսա թաքավրու ախչկան խետ փոխենքյ»: Մաշվարաթ կանեն, խորոտ կհազրվեն, էն մեկել օր ինեն ճամբախ:

Փեսեն ի, էն մեկել օր կէրթա կայ պարին կանի, կինեն ճամբախ:

Շատ կէրթան, քիչ կէրթան, կէրթան կխասնեն ճամխու կես տեղ չեն էլե: Սադրազամն ի, արաբեն կկայնցուցի, կասի. «Մե կտոր խանգյստանանք»: Էսա կիշերն ի սադրազամ թաքավորու ախչկան կառնի, կէրթա էնդիխ, ինոր էրկու աչկեր կխանի, կթողնի չեոլ-չիմնի մեչ, կուգյա ուր ախչկան թաքավորի ախչկա խալվներ կխագյուցի, կտնի ինոր տեղ: Ախչկան թափած վարթեր, մանուշակներ կժողվի, կուտա ուր ախչկան: Կտառնա ուր ախչկան կսովրցուցի, որ գյախ-գյախ վարթ թափի էստեխ-էնտեխ: Թաքավորու ախչկա ծամերաց կկտրի, մեյ քյանի ճող կպախի:

Առատուն ի, կէլնեն վեր, կինեն ուրենց ճամբախ կէրթան, կէրթան, կխասնեն ուրենց տեղ:

Սադրազամն ի, էսա ախչկան աչկեր որ խանե, բիթյուն օր, կիշեր-ցերեկ անձրև կուգյա: Որ կխասնեն ուրենց տեղ, տղի խերն ի նոր քեֆ- ուրախութեն կանի: Թաքավորն ի, որ կտիսնա հա անձրև կուգյա, կասի. - Էսա ինչ էլավ իմ խարսին, որ հա մոութ ի, հա անձրև կուգյա:

Խարսի մերն ի հա ուր ախչկան կուշտ նստե, կասի. - Թաքավոր ապրած կենաս, ախր էսա հալա կարիպ տեղ ի, ախչիկ ալա կմտածի, թազայ ի, յավաշ-յավաշ կշտկվի, կպայվի:

Գյեռ մերն ի հա էն կողմից ախչկան էլ կսովրցուցի, որ վարթ-մանուշակ թափի:

Գանք էն մեկել ախչկան, որ մնայե դաշտի մեջ: Էսա ախչիկն ի, կուլա կմոմոա ուր հալի վերեն, ի՞նչխ պիտի անի, ի՞նչխ պիտի չանի: Պիրդան էն կողմից մեյ խատ ծեն կլսի: Էսա ախչիկն ի, ականջ կտնի, կտիսնա որ ծեն հա կմոտոխասնա:

Կբոռա, կասի. - Խայ եք, տաճիկ եք, ի՞նչ եք, զիկ էսա տեղեն ազատեք:

Էսա մարթ որ կլսի էսա ծեն, կմոտոխասնա, կտիսնա որ ի՞նչ. մեյ խատ ջուխտ աչկեն քյոռ ախչիկ մը գյեռ ինգյե անվեր վերի դաշտի մեչ, խոդ կմադի ուր գյլխուն:

Էսա մարթն ի, իկեր էր դաշտ, ցախ կժողվեր, որ կլսի էսա ծեն կուգյա, կասի. - Ախչիկ, ինչի՞ ես իկե ըստեղ:

Էսա ախչիկն էլ կասի. - Ես խո իմ կամքով չեմ իկե, - կասի, - զիկ պերին էսա կես ճամբախ թալեցին, ըստեղ թողին, կնացին:

Էսա ախչիկն ի շատ աղաչանքյ-պաղատանքյ կինի էսա մարթուն, կասի. - Քյո աստծու սադաղեն էլնի, զիկ էսա տեղից մեկ ճար մ'արա: .

Էսա մարթն ի, կասի. - Ախչիկ, ես ֆուկարա մեյ մարթ իմ, ջեորով ցախ ժողվելով ծեր-ծերի կկպուցեմ, կապրեմ: Իմ իդարեն ջեորով կանեմ, ես քյե ի՞նչխ տանեմ պախեմ, էն էլ երկու աչկեն կոր, որ իսկի պան չի տիսնա: Թողզ էտա զաթի, - կասի, - ես յոթ խատ ախչիկ ունեմ:

Ախչիկն ի, շատ աղաչանքյ կէնի էսա մարթուն, կասի. - Տյու զիկ տար, տյու զարար չես անե:

Մարթն ի, ռայըմ կինի սիրտ, կասի. «Ի՞նչխ անեմ, վատրյք աստծուն պիտի»:

Կասի. - Էլի՛, էլի՛ էրթանքյ, տյուն էլ էլի ութ, խենքյ ի՞նչխ կէլնի, ախըր խաց տվող աստվածն ի, դե պոնի էսա փետ, ինզյի իմ իտև՝ էրթանքյ:

Ախչիկն ի, կասի. - Աղա, քյո մոտ ջվալ կա՞:

Մարթնի, կասի. - Խա:

Ախչիկն ի, կասի. - Որ կա, տյու ինզյի իմ իտև, ինչ որ կթափի զիզնից, ժողվի լից էտա ջվալ:

Մարթն ի, կինի էսա ախչկան իտև, կէրթա: Ճամբախ որ կէրթան, մարթն ի, կտիսնա, որ ի՞նչ. էսա ախչկան մոտեն ոսկի կթափի:

Ախչիկն ի, կասի. - Աղա, ի՛նչ որ կթափի՝ ժողվի:

Մարթն ի կժողվի, կլցի ջյոպեր, ջյոպեր կիլինվեն, կլցի ջվալ, ըսկուն որ էլ տեղ չմնա լցելու: Կուզյա՞ն, կուզյա՞ն, կխասնեն ուրենց տուն: Կէրթան ներս թե չէ՝ էսա յոթ ախչկներ կթափեն էսա ախչկան կտփեն: Կտառնան ինոնց խոր կասեն. - Մենք յոթ խատ խերիք չե՞նք, մեյ խատ էլ պիրիր, էն էլ ջուխտ աչկեն կոր:

Էսա ախչիկն ի, կասի. - Ծե մեռնեմ, զիկ պան մեքյ անե, ի՞նչ կէլնի, ես էլ ձեր քյորն իմ, տյուք զիզնից զարար չեք անե:

Իրիկուն ի, էսա ախչիկն ի, կէլնի էսա քյուրերաց մեկուն կասի. - Ի՞նչ կէլնի, մեյ խատ ճյուր տրեք, ես լոխկնամ:

Էսա ախչկներն ի, կասեն սակատամեռ էրեկ էկավ, էսօր կասի՝ զիկ լոխկցուցեք, մեկ էսա էր պակաս, ալա ի՞նչ շոտ լոխկնալու թադարյուք էլ կտիսնա՞, կասես զյեռ տան ախչիկ էլնի:

Էսա ախչիկն ի, շատ աղաչանքյ կէնի: Պստիկ ախչիկն ի, ռայիմ կինի սիրտ, կպերի ճյուր կտայցուցի, կպերի էսա ախչկան կլոխկցուցի: Կոր ախչիկն ի կասի. - Չէլնի էն ճյուր թափեք:

Ինոնք էլ ճյուր չեն թափե, կպախին չյուր էն մեկել առատուն: Էն մեկել առատուն կէլնին վեր, կտիսնան որ թաշտի իրես սադա ոսկի սեր ի պոնե: Կանչին անոնց խոր, էսա պան կասեն ինոր, կէրթան

թաշտի մեչեն էտա ոսկիք բիթյուն կժողվեն: Իսոր վերեն կպիրեն եա կլոխկցուցեն, ըսկուն որ իսոնց տուն-տեղ սադա ոսկի կտառնա:

Էսա ախչիկն ի, որ ջան կխովխրի կդնջանա՝ ծաղր կուգյա իրես. որ կծծղա, աշխար արև կառնի:

Սադրազամի ախչիկն ի, որ կտիսնա արևն առեր ի երկինք. ինքն էլ կպաշլայի ծծղալ: Էնգյախ ախչկան մերն ի կասի. - Տեսա՞ք. ես որ ծե ասի՝ իմ ախչիկ կարիբ ի, թազա յի իկե, իտոր խամար մալուլ ի, հա անձրև կուգյա: Մկա որ տնընեկ տառցավ, կծծղա, աշխարն էլ արևն առեց:

Իտոր վերեն թաքավորի տուն նոր քեֆ-ուրախութեն կանեն, կասեն՝ էսօր մեր թաքավորու խարս ծծղացե, ինոր խամար աշխար բիթյուն արև դեպե:

Գյանք էն մարթուն: Էսա մարթն ի ըսկուն կզանգյնա, որ նոր թազա ճեռչ քեռշկ-սարեմ կկայնցուցի, ուր յոթ ախչկներն էլ իրկան կուտա, ինքն էլ օրաստվոր կքաշի:

Ավուր մեկ էսա կոր ախչիկն ի, կասի. - Աղա, էսա վարթեր տար թաքավորի տռան աթրաֆ ծախի, որ կասեն՝ քանի՞ կուռուշ կուտաս, ասա՝ փարով չիմ ծախե, որ առնող կելնի, ասա՝ աչկով կուտամ, աչկով:

Էսա մարթն ի, կառնի էսա ախչկան պենիչ թափած վարթեր, կերթա թաքավորի տռան առաճ կբռռա, կասի՝ աչկով վարթ առեք, աչկով վարթ առեք:

Էսա սադրազամի կնիկն ի, որ կլսի փողան վարթ կծախեն, կելնի տուռ կբռռա՝ ախպեր վարթ, ախպեր վարթ, պե խենքյ ի՞նչխ կուտաս:

Մարթն ի, կասի. - Մորքյուր, փարով չեմ իտա:

Էսա կնիյն ի, կասի. - Ապա ինչո՞վ կուտաս:

Էսա մարթն ի, կասի. - Աչկով կուտամ, աչկով:

Էսա սադրազամի կնիյն ի, կտիսնա որ ուր ախչկան վարթեր խլըսեր ի, չարնաչար՝ կերթա էն ախչկա աչկեր որ խաներ ի, պախե ուր մոտ, մեյ խատ կպիրի կուտա՝ կառնի էտա վարթեր, կառնի՝ կառնի կերթա կուտա ուր ախչկան:

Էսա մարթն ի, կառնի էտա մեկ աչկ, կուգյա տուն: Կուգյա տուն, կուտա էսա ախչկան: Ախչիկն ի, կառնի էսա աչկ, կթքի վերեն, կտանի կպուցի ուր մեկ աչիչ տեղ: Սորա կլոխկնա խորոտ, աչկեր սաղ-սելիմ կկայնի տեղ:

Կընցնի մեյ քյանի շապաթ: Էսա ախչիկն ի, կծողվի ուր թափած վարթեր, կասի. - Աղա, էսա վարթերն էլ տար են դարբար, բալքի էս էլ ծախես, որ կխառցուցեն, թե քյանի յի, ասա՝ աչկով կուտամ:

Մարթն ի, կառնի էսա վարթեր, կինի փողիյիտանք կբռռա, կասի. - Աչկով վարթ առեք, աչկով վարթ առեք:

Էսա սադրազամի կնիյն ի, որ կլսի՝ վարթ կծախեն, կէլնի կվազի փողան, կկանչի վարթ ծախողին, կասի. - Ախպեր վարթ, ախպեր վարթ, ինչո՞վ կուտաս:

Էսա մարթն ի, կասի. - Աչկո՛վ կուտամ, մորքյուր, աչկո՛վ:

Սադրազամի կնիյն ի, կէրթա էն մեկ աչկն էլ կառնի կպերի, կուտա, էտա վարթեր կառնի:

Ի՞նչխ անի, ախչկա վարթեր խլլսեր ի:

Մարթն ի, կառնի էտա աչկն էլ, կէրթա տուն: Կէրթա տուն, էտա աչկն էլ կուտա էտա ախչկան: Ախչիկն ի, կառնի էտա աչկն էլ, կթքյի վերեն, կպուցի էն մեկել աչիչ տեղ, կէրթա կլոխկնա, էն էլ կէլնի խորոտ, սաղ-սելիմ աչկ: Էսա ախչիկն ի, որ աչկեր կկպնի տեղ՝ ըսկուն կխորոտկնա, որ կտառնա խուռն-խրեղեն: Շատ մարթ կուգյա իսոր ուզելու, էսա կասի՝ ես չեմ փսայվի:

Էսա ախչիկն ի, ավուր մեկ, էսա մարթուն կասի. - Աղա, մենքյ էսա կանդար զանգյընցանք, թաքավորի պես քեռշկ-սարա կայնցուցեր ինք, ըսկուն ճյոչ ի, որ կնացե խասեր ի թաքավորի խաս բախչի ոռքյ: Մկա մենքյ տառցեր ենք թաքավորու տրկեց: Ամոթ չի մե խամար որ մեյ խատ թաքավորին չկանչենքյ՝ տավաթի, գյա մեր տուն մեյ խատ շինախավորի: Թե որ չանենքյ՝ չասե՞ իսրոնք չեշիտ մարթ են. ի՞նչ չեշիտ տրկից են:

Մարթն ի կասի. - Ախչիկ, տյու կիտես, ինչխ կուզես՝ ըսկուն արա:

Ախչիկն ի, ըիթյուն թադարյուք կտիսնա: Էն մեկել օր կէլնի էտա մարթուն կէօրեռխկի թաքավորի մոտ, կկանչի ուր տուն:

Թաքավորու կնգյա մերն ի, որ էսա պան կլսի, կէրթա մոտ թաքավոր, կասի. - Թաքավոր ապրած կենաս, վո՞վ ի որ տյու կանանանթ կանես՝ կէրթաս ինոնց տուն:

Թաքավորն ի, կասի. - Չէ, ի՞նչխ կէլնի որ չէրթամ, իմ խոդի մեչ էտա չեշիտ, զանգյին մարթ էլնի, ի՞նչխ կէլնի որ չէրթամ, մեյ խատ տիսնամ:

Սադրազամի կնիկն ի, ինչխ կանի, չանի, չի կանա թաքավորին համոզի:

Թաքավորն ի, էսա մարթուն խոսք կուտա, կասի. - Վանդ էսա գյանխ կուզյամ ծեր տուն:

Էսա մարթն ի, կտառնա կուգյա ախչկան կասի. - Գյեռ թաքավորիս խոսք կառնի, որ վաղ էսա գյանխ մեր տուն պիտի գյա:

Ախչիկն ի, որ էսա խոսք կլսի, կէլնի ուր թադարյուք կտիսնա, ուրենց տունիս չուր թաքավորի տուն ուռաճ խալի կտոռի, որ թաքավորի ոտ չառնի զյեռին:

Թաքավորն ի, էն մեկել օր կէլնի խեռ ուր զեռքնչին, կնգյան, կուգյան:

Ախչիկն ի, կառնի իսընցան, առոք-փառոք կտանի տուն: Կելնին վեր, կնստեն, սարիս-ծորիս խաբար կուտան, չյուր կուգյա խայի գյախ:

Ախչիկն ի, կխրամցուցի խայի, կերթան գյեռ կնստեն խայի վերեն: Իքյրամ ագաթ, զմեն պան ուր տեղ լյուն ի: Էտա սուֆրի վերեն կա մեյ խատ ճեռչ խրեղեն նուռ, մեյ խատ էլ խոծիքյ:

Էսա թաքավորն ի, կտիսնա որ սուֆրեն էն չեշիտ զարդրված ի, որ կզարմանա, կտեպռի: Կտիսնա որ մեյ խատ ճեռչ խրեղեն նուռ մեչ ենտեղ սուֆրի վերեն տրված ի, մեկ ծերն էլ մեկ խատ խոծիքյ:

Իսոնք կնստեն գյեռ կբաշլայեն խայ ուտել: Ուտելու վախտն ի, ախչիկն ի որ կծողա, արև կառնի, որ խաբար կուտա՝ վարթ-մանուշակ կթափի. որ կքյելի՝ ուր քյելած ճամբախ բիթյուն ոսկի կթափի: Թաքավորն ի, որ էսա պան կտիսնա, կզարմանա: Կասի. «Էսա ի՞նչ պան ի, ես գիտեմ մենակ իմ կնիկն ի ըսկնա, էսա՞ որտեղիս պյուսավ, ըսկուն որ շքայի կմտնի»: Իսկ թաքավորի զեռքյանչ զաթի ուր կուտի, էլ չկանա սպրի:

Էսա ախչիկն ի, կասի. - Թաքավոր ապրած կենաս, էսա նուռ ինան էսա խոծիքյ խեստ մեյ-մկու կյուրմիշե՞ն:

Թաքավորն ի, շատ կիրիշկա, թայմին կանի, կասի. - Ի՞նչ ասեմ, մեյ-մեկելու չեն ուրմիշե:

Ախչիկն ի, կասի. - Թաքավոր ապրած կենաս, որ ըտըսկնա ի, կասի, - ապա տյու ինան էտա քյեռ կնիկ, ի՞նչխ ուրմիշիր եք:

Թաքավորն ի, չկիտի ի՞նչ ասի, լեզուն կլալկվի:

Ախչիկն ի, կասի. - Թաքավոր ապրած կենաս, ես չեմ ասի, թող իսոնք ասեն, էսա նուռ թող ասի:

Ախչիկն ի, կասի. - Ա՛յ խոծիքյ, տյու ասա, այ շամ նուռ, տյու պատռի:

Էսա ախչիկ որ չի ասի՝ նուռ տյու պատռի, նուռ բիրդան կպատռի: Նուռ որ կպատռի, թաքավորի ինան ուր կնգյան պոկներն էլ կպատռի: Ախչիկն ի, կառնի նռան մեյ խատ, կտանի կքսի թաքավորու պոկի-վերեն՝ թաքավորու պռուկ կսաղանա:

Էսա ախչիկն ի, գյինա կասի. - Շահ նուռ, տյու ասա. ըստեղ որ վուրող որ կարմիլին, երկու կտոր էլի և մե մեկ ուր առաճ կնա:

Էսա նուռն ի, կելնի երկու կտոր: Մեյ կերթա էսա թաքավորի առաճ, մեյ կուգյա ուր առաճ:

Էսա ախչիկն ի, կասի. - Ինչխ պիտի մեյ տեղ էլենք, տյու ասա:

Էսա նուռն ի, էլմ'էլ կուգյա, կկպնի իրար:

Էսա ախչիկն ի, կասի. - Ա՛յ թաքավոր ապրած կենաս, ինչխ որ էսա նուռն էլավ մեյն էկավ քյո առաճ, մեկ իմ, սորա էկան մեյ-մեկելու կպան, ըսկուն էլ մենքյ ինքյ:

Ախչիկն ի, կասի. - Ես որ կամ՝ Նազլուն իմ, Նազլուն՝ քյո խալալ կնիկ, տյու որ կաս՝ Մազման իս, Մազման՝ իմ խալալ իրիկ: Իսոնք որ կան՝ իմ աչկեր խանոռներն ին:

Ախչիկն ի, կբաշլայի ուր գյլխու էկածներ թաքավորին մեյ-մեկ կպատմի:

Թաքավորն ի, որ էսա պան կտիսնա, կթեբոի, կկայնի, կտիսնա, որ աղորթ ի. ախչիկ որ քելի՝ ոսկի կթափի, որ խաբար տա՝ վարթոհան կթափի, որ ծծղա՝ արև կդեպի, որ լա՝ էրկինք կրակ տա, գյոգյռա: Թաքավորն ի որ էսա պան կտիսնա, կասի. «Խա, էսա իմ խալալ կնիյն ի»: Կառնի կէրթա ուր տուն: Նոր խարսնիս, նոր քեֆ, նոր ուրախութեն կանեն յոթ օր, յոթ կիշեր:

Էսա թաքավորն ի, կէլնի ուր խին կնգյան ինան զեռնքընչին կուտա կապել ծիյու պոչ, կթողնի սար-քար, ըսկուն կէլնեն, որ ինոնց նմուշ էլ չէրնա: Իրիկուն մենակ ինոնց մազեր, որ կապեր ին ծիյու պոչիս, մենակ մազեր կառնեն կուգյան կուտան թաքավորին: